ի տօնի իւրում և մնաց ի պատարագին, եւ յորժամ գնաց ի տուն իւր և հիւանդացաւ ի մահ, և խնդրեաց աւրէնս, և ետ զխոստովանութիւն հաւատոյն. և տեսանէր զհրեշտակս Աստուծոյ, զի ասէին ընդ նմա, թէ զի՞րդ համարիս կատարեալ ուղղափառութեանն զկեանս քո, զի տեսեր զանարժանիցն զպատարագն և աղօթեցեր ընդ նոսա։ Իսկ կինն այն բարեպաշտ, ապա խնդրեաց յԱստուծոյ, տալ նմա ապաշխարութեան ժամանակ, եւ տուաւ նմա, եւ յարեաւ ի հիւանդութենէ և արտասուօք հայցէր յԱստուծոյ յեկեղեցւոջն յայտնել նմա զարժանաւոր խոստովանութիւնս, և եղև նմա բան լսելի ի սեղանոյ անտի որ ասէր. որդին Աստուծոյ նոյն էր, որ ծնաւ ի Կուսէն եւ խաչեցաւ եւ թաղեցաւ եւ յարեաւ, մի բնութիւն փառաւորեալ անշփոթ միաւորեալ ընդ նմա կատարեալ մարմին» (Գ. Թղ. էջ 524)։

4. Ասակերտարանի եկեղեցին (614–1099).— 870ին Բեռնարդոս վանականը Դեթսեմանիի մէջ Քրիստոսի աղօթած տեղւոյն և Համբարձման լերան միջև տեսած էր Յիսուսի կողմէ գրուած արձանագրութիւնը այնտեղ՝ ուր փարիսեցիները Փրկչին քով բերին շնացեալ կինը։ Այս պարագան սակայն չի յարմարիր Աւետարանին, վասն զի Յիսուս թողած էր Զիթենեաց լեռը և Տաճարին մէջ կը գտնուէր, երբ իրեն բերին շնացեալ կինը։ Բայց ուխտաւորաց առաջնորդները անստուգութենէ չեն քաշուիր։ Անոնք նոյն իսկ ցոյց կուտային մարմարի վրայ քանդակուած արձանագրութիւն մը զոր Յիսուս երբ թէ մատներովը գրած էր, երբ Ան սկսաւ գետնին վրայ գրել փարիսեցիները հեռացնելու համար։ Այս արձանագրութիւնը կը գըտ-